

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ**

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
խմբագրական խորհուրդ՝

Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Զուգասյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:

Арман Егиазарян (редактор, д.и.н., проф.), **Арам Симонян** (директор Института Арменологических исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсисян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:

Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, associate prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, associate prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Սեյրան Չաքարյան - ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ, ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՎ ԻՄԱՍՏԱՍԻՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	8
Сейран Закарян - ИСТОЧНИКИ ФИЛОСОФИИ ГРИГОРА ТАТЕВАЦИ, ЕГО ИДЕИ И СПЕЦИФИКА ЕГО СПОСОБА ФИЛОСОФСТВОВАНИЯ.....	16
Seyran Zakaryan - GRIGOR TATEVATSI'S PHILOSOPHICAL SOURCES, IDEAS AND PECULIARITIES OF THE WAY OF PHILOSOPHIZING.....	17
Հասմիկ Ամիրջանյան - ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՅՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԿՈՐ-ՎԱՐՉԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.....	19
Асмик Амирджанян - ДУХОВНО-АДМИНИСТРАТИВНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ГУКАСА КАРНЕЦИ.....	27
Hasmik Amirjanyan - ADMINISTRATIVE-SPIRITUAL ACTIVITIES OF GHUKAS KARNETSI.....	28
Վարդան Միսիրջանյան, Գոհար Ղամբարյան - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ՍԵՎԱՆԼԱ ԼՅԻ ԱՎԱԶԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ XIX ԴԱՐԻ 30-ԱՎԱՆՆԵՐԻՆ.....	29
Вардан Мхитарян, Гохар Гамбарян - ИНФОРМАЦИОННАЯ ВОЙНА: НАСЕЛЕННЫЕ ПУНКТЫ БАСЕЙНА ОЗЕРА СЕВАН В 30-Х ГОДАХ XIX ВЕКА.....	39
Vardan Mkhitaryan, Gohar Ghambaryan - INFORMATION WAR: SETTLEMENTS OF THE LAKE SEVAN BASIN IN THE 30s of XIX.....	39
Լիլիթ Մակարյան - ԱՊԱՐԱՆԻ ՎԱՐԴԵՆԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԻ ԵՎԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԵՃՉԳՐՏՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐԶ.....	45
Лилит Макарян - К ВОПРОСУ О ПЕРЕСЕЛЕНИИ СЕЛА ВАРДЕНИС АПАРАНА И УТОЧНЕНИИ НАЗВАНИЙ МЕСТНЫХ ЦЕРКВЕЙ.....	49
Lilit Makaryan - ON RESETTLEMENT ISSUE OF VARDENIS VILLAGE OF APARAN AND NAME CLARIFICATION OF LOCAL CHURCHES.....	49
Ֆելիքս Մովսիսյան - ՌՈՒՄԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ XIX ԴԱՐԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ.....	50
Феликс Мовсисян - ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ РОССИЙСКИХ АРМЯН ОБ ИТАЛЬЯНСКОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ XIX ВЕКА.....	66
Felix Movsisyan - ARMENIAN PERIODICALS OF RUSSIA ON THE 19TH CENTURY NATIONAL STRUGGLE OF ITALY.....	67
Սուսաննա Առաքելյան - ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ-ԼՈՒՄԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1864-1896 ԹԹ.....	69

Сусанна Аракелян – ОБРАЗОВАТЕЛЬНО-ПРОСВЕТИТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО ГУМАНИТАРНОГО ОБЩЕСТВА БАКУ И СТРОИТЕЛЬСТВО ШКОЛ В 1864-1896.	87
Susanna Arakelyan – EDUCATIONAL AND SCHOOL-BUILDING ACTIVITIES OF ARMENIAN HUMANITARIAN SOCIETY OF BAKU IN 1864-1896.	87
Գեղամ Բաղայան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ [Սևերակի, Ջերմուկի, Միդիատի, Մծբինի (Նիսիբին) և Վերանշեհիրի գավառները].....	88
Гегам Бадалян – ИСТОРИКО-НАРОДНОЕ ОПИСАНИЕ ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН (Северакский, Джермукский, Мидиатский, Мцбинский (Нисибинский) и Вераншехирский уезды).	115
Gegham Badalyan – HISTORICAL-NATIONAL DESCRIPTION OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE (provinces Severak, Jermuk, Midiat, Mtsbin (Nisibin) and Veranshehir).	115
Աննա Վարդանյան – ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐ. ՀԱՅ-ԵԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ	117
Анна Варданян – ДИАНА АБГАР - «МАТЬ АРМЕНИИ НА ДАЛЬНЕМ ВОСТОКЕ»: ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ. ПО СЛЕДАМ ИСТОКОВ АРМЯНО-ЯПОНСКИХ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ОТНОШЕНИЙ.	123
Anna Vardanyan – DIANA ABGAR -“MOTHER OF ARMENIA IN THE FAR EAST”: LIFE AND ACTIVITIES. TRACING BACK TO ARMENIAN-JAPANESE HISTORICAL AND CULTURAL RELATIONS.	124
Գայանե Հովհաննիսյան – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ 1926 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ	125
Гаяне Оганнисян – НАСЕЛЕНИЕ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ПО ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ 1926 г.	132
Gayane Hovhannisyan – POPULATION OF THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION ACCORDING TO THE ALL-UNION CENSUS (1926).	133
Արտակ Խաչատրյան – ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻՆ ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....	134
Артак Хачатрян – НАЦИОНАЛЬНЫЙ ВОПРОС В ВОСПРИЯТИИ БОЛЬШЕВИСТСКОЙ ПАРТИИ В ДОСОВЕТСКИЙ ПЕРИОД (1903-1917 гг.).....	141
Artak Khachatryan – NATIONAL ISSUE IN THE PERCEPTIONS OF THE BOLSHEVIK PARTY IN THE PRE-SOVIET PERIOD (1903-1917).	141
Մանյակ Երանոսյան – ՀԱԿՈՒ ԶԱՎՐԻՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԶՐՈՒՄՈՒՄ (1916 Թ. ՀՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ)	142
Маняк Ераносян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ЯКОВА ЗАВРИЯНА В ЭРЗРУМЕ (ИЮЛЬ-СЕНТЯБРЬ 1916 Г.).....	149
Manyak Yeranosyan – НАКОВ ZAVRIYAN'S ACTIVITIES IN ERZRUM (1916 JULY-SEPTEMBER).	150

Գևորգ Կեսոյան - ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԹԻՎ - ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....	151
Геворг Кесоян - СИТУАЦИЯ НА ГРАНИЦЕ ТУРЦИЯ-СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.....	159
Gevorg Kesoyan - THE SITUATION ON THE TURKISH-SOVIET ARMENIAN BORDER DURING THE GREAT PATRIOTIC WAR.....	160
Արման Սաֆարյան - ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՎԱՆ- ԴՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՐԸ՝ ՄՈՒՆԻՏԻՄԵՆՏԻՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԲԱՎ- ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....	161
Арман Сафарян - РОЛЬ ТРАДИЦИЙ АРМЯНСКОЙ ПУБЛИЦИСТИКИ В ПРОЦЕССЕ ОСВЕЩЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ ПРОБЛЕМАТИКИ В МУЛЬТИМЕДИЙНОМ ПРОСТРАНСТВЕ.....	164
Arman Safaryan - THE ROLE OF ARMENIAN OPINION JOURNALISM IN THE COVERAGE OF ECOLOGICAL ISSUES IN MULTIMEDIA.....	165
Սարգիս Սկրտչեան - ՊԱՆԹԻՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ- ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՐՉԵՐԻՆ - 21- ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԵՐԻՆ.....	166
Саргис Мкртчян - ДЕЯТЕЛЬНОСТЬ ПАНТЮРКИСТСКИХ ОРГАНИЗАЦИЙ В ИРАНЕ В КОНЦЕ XX - НАЧАЛЕ XXI ВЕКОВ.....	174
Sargis Mkrtchian - ACTIVITIES OF PAN-TURKISH ORGANIZATIONS IN IRAN AT THE END OF THE 20TH CENTURY - AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY.....	174
Սերի Նաջարյան, Հռիփսիմե Մուրադյան - ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈ- ՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎՆԱԶՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (2001-2016թթ.).....	176
Мери Наджарян, Рипсима Мурадян - ПОЗИЦИЯ ГЕРМАНИИ В ВОПРОСЕ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН (2001-2016 ГГ.).....	183
Meri Najaryan, Hripsime Muradyan - GERMANY'S STAND ON THE ISSUE OF INTERNATIONAL RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE (2001-2016).....	184
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ / ТЕОРИЯ ИСТОРИИ / THEORY OF HISTORY	
Գևորգ Եաղարյան - ԱՆՑՅԱԼԻ ՊԱՏՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎՆԱԴԱՐ- ՀԻՆ (ԹՈՄԱՍ ԶԱՐԼԱՅԼԸ ԵՎ ՆՐԱ «ԴԱՐՁԵԱԼ Ի ԿԵՐԱՅ ՊԱՏՄՈՒ- ԹԵԱՆ» ՀՈԴԿԱԾԸ).....	185
Геворг Тшагарян - НА ПУТИ ИСТОРИЗАЦИИ ПРОШЛОГО (ТОМАС КАРЛЕЙЛЬ И ЕГО СТАТЬЯ «СНОВА ОБ ИСТОРИИ»).	205
Gevorg Tshagharian - ON THE PATHWAY OF HISTORICIZATION OF THE PAST (THOMAS CARLYLE AND HIS ESSAY «ON HISTORY AGAIN»).....	206
Լիզա Քարիմյան - ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ «ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ» ԳՈՏՈՒ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ-ՖԻԴԱՆՅԱՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ.....	207
Лица Каримян - КОНЦЕПЦИЯ АРМЯНО-ВИЗАНТИЙСКОЙ “КОНТАКТНОЙ” ЗОНЫ В. АРУТЮНОВОЙ-ФИДАНЯН.....	216

Liza Karimyan - V. ARUTYUNOVA-FIDANYAN'S CONCEPT OF ARMENIAN-BYZANTINE "CONTACT" ZONE. 217

ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ֆրինա Բաբայան - ՀՈՍՏՈՒՆ (ՈՍՏԱՆ) ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2005-2006 ԹԹ.) 218

Фрина Бабаян - РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК СРЕДНЕВЕКОВОГО ПОСЕЛЕНИЯ ХОСТУН (2005-2006 ГГ.) 222

Frina Babayan - RESULTS OF EXCAVATIONS AT THE MEDIEVAL SETTLEMENT OF HOSTUN (2005-2006 SEASONS) 223

Ռաֆիկ Նահապետյան - ԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՉ (XIX դ. - XX դ. սկիզբ) 228

Рафик Наапетян - ТРАДИЦИОННАЯ СИСТЕМА РАССЕЛЕНИЯ АРМЯН (XIX В. - НАЧАЛО XX В.) 235

Rafik Nahapetyan - THE TRADITIONAL SYSTEM OF SETTLEMENT OF ARMENIANS (XIX CENTURY - BEGINNING OF XX CENTURY) 235

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Արման Եղիազարյան - ՀՅՂ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂԹԱԿԱՅՐԵՐՈՒՄ 1920-ԱՎԱՆ ԹԹ. ԵՎ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ 237

Арман Егиазарян - ДЕЯТЕЛЬНОСТЬ АРФ ДАШНАКЦУТЮН В ДИАСПОРЕ В 1920-Е ГОДЫ И ПРОБЛЕМА СОЗЫВА ОБЩЕДИАСПОРНОГО КОНГРЕССА 247

Arman Yeghiazaryan - ACTIVITIES OF ARF DASHNAKTSUTYUN IN DIASPORA IN THE 1920S AND THE PROBLEM OF CONVENING A DIASPORA CONGRESS 248

Հայկ Մարտիրոսյան - ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ 249

Айк Мартиросян - СОТРУДНИЧЕСТВО КОМИТЕТА ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ США 257

Hayk Martirosyan - COOPERATION OF THE COMMITTEE OF THE CULTURAL RELATIONS WITH ARMENIANS OF DIASPORA WITH THE ARMENIAN COMMUNITY OF THE USA 257

Էդիկ Մինասյան - ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱԴՆԵՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 21-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՍՅԱԿՆԵՐՈՒՄ 259

Эдик Минасян - ДЕЯТЕЛЬНОСТЬ ВСЕАРМЯНСКИХ ФОНДОВ, ОБЩЕСТВЕННЫХ И БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ ПО УКРЕПЛЕНИЮ ОТНОШЕНИЙ АРЦАХ-ДИАСПОРА В ПЕРВЫЕ ДЕСЯТИЛЕТИЯ XXI ВЕКА 272

Edik Minasyan – ACTIVITIES OF THE ALL-ARMENIAN FUNDS, NGOS AND CHARITABLE ORGANIZATIONS TO STRENGTHEN ARTSAKH-DIASPORA RELATIONS IN THE FIRST DECADES OF THE 21ST CENTURY. 273

Կարեն Մկրտչյան – ԱՐՏԱԳԱՂԹԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 274

Карен Мкртчян – МИГРАЦИЯ И ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ ИРАНА. 280

Karen Mkrtchyan – MIGRATION AND EDUCATIONAL PROBLEMS IN THE ARMENIAN COMMUNITY OF IRAN. 281

ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ / ПЕДАГОГИКА / PEDAGOGY

Սերի Հովհաննիսյան – ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԺԵՔՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ (ծննդյան 180-ամյակի առթիվ)..... 282

Мери Оганнисян – ЦЕННОСТНЫЕ ПОДХОДЫ К ОБРАЗОВАНИЮ ПО ГАЗАРОСУ АГАЯНУ. 289

Meri Hovhannisyan – VALUE-BASED APPROACHES TO EDUCATION BY GHAZAROS AGHAYAN. 289

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Էրիկ Գալեգիսի ՄԻՆԱՍՅԱՆ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2018 թթ.), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՂՈՒԹՅՈՒՆ, 2020, 380 էջ + 16 էջ ՆԵՐՊԻՐ:..... 291

ԲԱԶՄԱԿԱՍՏԱԿ ԱԶԳԱԳՐԱԳԵՏԻ ՆՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 293

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՄԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ-17-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ, ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՂՈՒԹՅՈՒՆ, 2020, 300 էջ:..... 295

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՍՓՈՐԴՆԵՐ 298

ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ. 2020 թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱՆՄԱՀԱՑԱԾ՝ ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍԱՆԵՐԸ 315

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 318

INFORMATION ABOUT THE AUTHORS 320

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 322

NOTICE FOR THE AUTHORS 322

Լիզա Քարիմյան

ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ «ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ» ԳՈՏՈՒ Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՎԱ-ՖԻԴԱՆՅԱՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Հիմնաբառեր. սահմանամերձ տարածք, սահմանամերձ գոտի, կոնտակտային գոտի, մշակութային երկխոսություն, հավատքային երկխոսություն, Քաղկեդոնական եկեղեցի, քաղկեդոնականություն, հակաքաղկեդոնական եկեղեցի, հակաքաղկեդոնականություն, խորա:

«Հայաստանում գերիշխող հայ քաղկեդոնական եկեղեցու» մասին Վ. Հարությունովա-Ֆիդանյանի սուբյեկտիվ և փաստերով չհիմնավորված հայեցակարգ առաջադրելու գործիքակազմում ուրույն տեղ է հատկացվել «կոնտակտային գոտի» հասկացության մեկնաբանությանը:

Հեղինակը միանգամայն օբյեկտիվ է, երբ պնդում է, որ «Ցանկացած բանավեճի մասնակցելը ենթադրում է այդ առարկայի մասին հստակ պատկերացում» և այդ դիրքերից փորձ է կատարել «կոնտակտային գոտի» հասկացությունը և դրա գոյության առանձնահատկությունները քննարկել «...երեք՝ հասարակական-վարչական, ազգահավատքային և հոգեկերտվածքի (մենթալ) մակարդակներով»¹: Ընդ որում, այդ պարագայում նրա ելակետը բացառապես հայ-բյուզանդական բազմադարյա հարաբերություններն են, որոնք իբրև հարացույց դիտարկվում են որպես ժամանակի և տարածության մեջ ծավալվող «հայ-բյուզանդական կոնտակտային գոտի»: Թե այդ տեսակետը ինչ տեղ է գրավում «Հայաստանում հաղթանակած հայ քաղկեդոնական եկեղեցու» մասին Վ. Հարությունովա-Ֆիդանյանի ինքնատիպ լուծումների շարքում, կարելի է մակաբերել այն հավաստումից, որ «VI-XI դարերի հայ ուղղափառ համայնքից բացի բյուզանդագետ և հայագետ հետազոտողի ինքնատիպ մշակումներից է Բյուզանդիայի սահմանամերձ տարածքներում հասարակական նոր մակերևույթի՝ «կոնտակտային գոտի» եզրով նշանակվող վարկածը»²:

Հեղինակի կողմից հայ-բյուզանդական սահմանամերձ տարածքներում ծավալված հարաբերությունների ընտրությունը պարզ բացատրություն ունի: Նախ, այն պատճառով, որ Վ. Հարությունովա-Ֆիդանյանի համոզմամբ հենց այդտեղ է ձևավորվել հայ-բյուզանդական կոնտակտային գոտին³, այդտեղ են ընթացել առավել խորքային պատմական գործընթացները՝ Հայաստանի պատմությունը, Բյուզանդիայի պատմությունը և հայ-բյուզանդական հարաբերությունները: Եվ, երկրորդ, նրա համոզմամբ այդ գոտում են իրագործվել հա-

* Հոդվածը ներկայացվել է 12.08.2020 թ., գրախոսվել՝ 09.12.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.12.2020 թ.:

¹ Арутюнова-Фиданян В., К вопросу о концепции контактной зоны (по поводу ст. В. П. Степаненко), «Византийский временник», т. 59 (84), М., 1999, с. 62.

² Տե՛ս Դձաձաձանյան Է., Арутюнова-Фиданян Видада Артуровна, «Православная энциклопедия», т. III, М., 2001, с. 472.

³ «Կոնտակտային գոտի» ելըրը, — գրում է Վ. Հարությունովա-Ֆիդանյանը, — փոխառել է Վ. Դ. Կորոյունկից», Арутюнова-Фиданян В., К вопросу о концепции контактной зоны (по поводу статьи В.П. Степаненко), с. 59. Մեկ այլ հոդվածում նրա կողմից հիշատակում է նաև «բյուզանդական համագործակցության երկրների» մասին օբյեկտիվ բյուզանդագետ Դ. Օրդլենսկու մոդելը ընդարձակելու և հայ-բյուզանդական հարաբերությունների վրա տարածելու անհրաժեշտությունը: Տե՛ս Арутюнова-Фиданян В., Контактные зоны в системе «Византийского содружества государств», «Русь и Византия: Место стран византийского круга во взаимоотношениях Востока и Запада», тезисы докладов XVIII Всероссийской научной сессии византинистов. М., 2008, с. 15.

րաբերվող կողմերի բազմաստիճան քաղաքական, հասարակական-տնտեսական, ռազմական և, հատկապես, մշակութային փոխներթափանցումները, որոնք, իրենց հերթին, խորապես ազդել են պատմական նշալ գործընթացների վրա¹:

Անդրադառնալով հայ-բյուզանդական «կոնտակտային գոտու» կայացման հիմնահարցի քննությանը, Վ. Հարությունովա-Ֆիդանյանը վերջինիս ձևավորման հիմքերից առաջինը համարում է այն, որ մի քանի հարուրամյակ Հայաստանը գոյատևել է հելլենական, հելլենիստական, հետագայում նաև՝ բյուզանդական աշխարհի հետ: Հայաստանը և Բյուզանդիան գտնվել են իրենց համար ընդհանուր արևելաքրիստոնեական արեալում և այսպես կոչված «բյուզանդական մշակութային շրջանում»: Եվ քաղաքական, հավատքային ու մշակութային սահմանների շարժունության և թափանցիկության, ինչպես նաև սերտ հարաբերությունների արդյունքում հայ-բյուզանդական սահմանամերձ տարածքներում ձևավորվել է հասարակական այն նոր մանրակերտը, որն **առաջին անգամ իր կողմից բնութագրվել է որպես «կոնտակտային գոտի»**: Այս հարցում նրա ելակետն այն է, որ «Կոնտակտների գոտիները տարածության և ժամանակի մեջ որքան հնարավոր է կարող են լինել նեղ կամ լայն՝ այն տեղերում, որտեղ ոչ տևականից մինչև վիթխարի տարածքներ խաչավորվում են ժողովուրդների և պետությունների առևտրական, ռազմական, հավատքային, տնտեսական, դիվանագիտական և նման շահերը, որտեղ տևական ժամանակ հարաբերվում են ազգերը և նրանց մշակութային համակարգերը: Կոնտակտների գոտիները կարող են հանդիսանալ նաև ազգամիջյան և միջպետական սերտ հաղորդակցության արդյունք»²:

Անհրաժեշտաբար հեղինակն անդրադառնում է նաև «կոնտակտային գոտի» հասկացության մեխանիզմների վերլուծությանը: Այդ կապակցությամբ նա նախ պարզաբանում է, որ այդ գոտին, հավանաբար, հոմանիշ չէ բաժանարար կամ միավորիչ «բուֆերին», մշակութային մարզին կամ պարզապես սահմանին: Եվ, ինքնին հասկանալի է, չի կարելի ենթադրել, որ կոնտակտային գոտին կարող է գոյություն ունենալ միավորիչ մեկ առաջատար հատկանիշի (աշխարհագրական, հավատքային և այլն) առկայությամբ, կամ ընկալվել միայն որպես տարածքային տնտեսական-մշակութային տարբեր տիպերի շփումներ (օրինակ, քոչվոր անասնապահության գոտի և նստակեցության գոտի), կամ զանազան դավանանքների շփումներ՝ շեշտադրելով դրանց հակադրությունը: Հարկ է մատնանշել նաև, որ տարբեր ուղորտներում և անգամ մեկ բառակապակցության սահմաններում «կոնտակտային գոտին» լրացվում է տարբեր բովանդակությամբ»³:

Միաժամանակ, նա պարզաբանում է, որ իբրև յուրատիպ համակարգ «կոնտակտային գոտին» պետք է բնութագրվի միայն իրեն բնորոշ ներքին առանձնահատկություններով: Եվ վերլուծական այդ մոտեցման դիրքերից պնդում է. «Սահման, սահմանամերձ տարածք, հարաբերությունների գոտի, կոնտակտային գոտի հասկացությունները պատմագրության մեջ փոխարինելի են, այսինքն՝ կոնկրետ բովանդակություն չունեն: Հետազոտության օբյեկտը, այդպիսով, եպիստեմոլոգիապես բավարար հստակ սահմանված չէ և պահանջում է հայեցակարգի և սեփական հասկացությունների ապարատի մշակում: «Կոնտակտային գոտու» ուսումնասիրության առաջնահերթ խնդիրը նրանում է, որ հեղիեղուկ իմաստաբանությամբ այդ հասկացությանը կատեգորիալ խստություն հաղորդվի: Այդ նպատակի համար առավել ակնհայտ է Հայաստանի և Բյուզանդական կայսրության պատմական դիրքորոշումների քննարկումը»⁴:

¹ *Տե՛ս նույն տեղում, էջ 16:*

² *Արутյուнова-Фиданян В., Синтезная контактная зона: пространство и концепция, “Древняя Русь и средневековая Европа: возникновение государств”, материалы конференции, М., 2012, с. 13.*

³ *Նույն տեղում, էջ 14: Հմմտ. Արутյուнова-Фиданян В., Контактная зона: концепции и термины, “Проблемы исторического познания”, М., 2008. с. 155-157; նույնի՝ Термин «контактная зона» или «земля» - «хора», “Восточная Европа в древности и средневековье”, материалы к конференции. М., 1998, с. 4:*

⁴ *Արутյուнова-Фиданян В., Синтезная контактная зона: пространство и концепция, с. 14. Տե՛ս նաև նույնի՝ Термин «контактная зона» или «земля» - «хора», с. 4.*

Այդ դիտանկյունից նրա ընդհանրացնող տեսակետն այն է, որ «կոնտակտային գոտին» չպետք է տարածաժամանակային լայն սահմանում ունենա, քանի որ նման մոտեցումը ոչ միայն չի կարող նպաստել հիմնահարցի ծավալային նկարագրությանը, այլև նշյալ գոտու ոլորտից դուրս կթողնի կառույցի գլխավոր կառուցատարրը: Հավասարապես չի կարելի զանց առնել նաև ազգա-աշխարհագրական տեսանկյունը, քանի որ դա ակնհայտ հակասության մեջ կլինի աշխարհագրական պայմանների և ազգային սուբստրատի՝ ցանկացած հարաբերությունների կյուբական (քաղաքական, տնտեսական, հավատքային, մշակութային) հենքի մասին աբսիուդայի հետ¹: Նրա համար մերժելի է նաև այն տեսակետը, որ կոնտակտային գոտին իր մեջ ներառում է տևական շրջանում փոխազդեցության մեջ գտնվող տարբեր ծագում և պատմական զարգացման տարբեր մակարդակ ունեցող ազգային խմբերը: Ըստ այդմ նա անընդունելի է համարում նաև այն պնդումը, որ կոնտակտային գոտին իրենից ներկայացնում է «բաժանարար և, միաժամանակ, միավորիչ բուֆերային սահմանային տարածք (սահման)»²: Այդ մոտեցումը բացատրում է նրանով, որ կոնտակտային գոտին չի կարող լինել ո՛չ բաժանարար, ո՛չ էլ միավորիչ բուֆեր, ո՛չ պարզապես մշակութային մարզ, կամ միայն սահման: **Այն սկզբունքորեն միանգամայն այլ կառույց է**, թեև կասկածից վեր է, որ ներառում է վերջին երկու հասկացությունների բովանդակությունը: Եվ, հասկանալի է, չի կարելի պնդել, եզրակացնում է նա, թե կոնտակտային գոտին կարող է գոյություն ունենալ միայն մեկ միավորիչ հատկանիշի (աշխարհագրական, հավատքային և այլն) առկայության դեպքում³:

Վ. Հարությունովա-Ֆիդանյանը հավաստում է նաև, որ «կոնտակտային գոտի» հասկացության նոր հայեցակարգ առաջադրելով, առաջին հերթին հետամուտ է հստակորեն սահմանել հետազոտության առարկան: «Կոնտակտային գոտի» եզր ասելով, — պարզաբանել է նա, — ես հասկանում եմ ոչ թե սոսկ տարածք, որտեղ միմյանց չխառնվելով գոյատևում են ազգությունները, ոչ թե ինքնավար զարգացման անկլավներ, այլ օրգանական և կենսունակ կառույց՝ իր օրենքներով և մշակութային պատկերի առանձնահատկությամբ: Նման կառույցների ձևավորումը, իմ կարծիքով, կարող է կապված լինել իրենց տարածքներում բաց մշակույթների ներկայացուցիչների գոյության և գործունեության հետ, որոնք ապահովում են էվոլյուցիոն զարգացման հավասարակշռությունը, հայ-բյուզանդական կոնտակտային գոտում այդպիսի խումբ եղել են հայ քաղկեդոնականները»⁴:

Այդ մոտեցման արդյունքում անխուսափելի է այն եզրահանգումը, որ **հեղինակի հիմնական համոզումն այն է, որ «կոնտակտային գոտի» ձևավորելու համար անհրաժեշտ է միայն քաղկեդոնական ենթահող**: Իսկ դրանից հետևում է նաև, որ նշյալ «կոնտակտային գոտին» ինքը անկատար է կամ միակողմանի, հետևաբար չի կարող հավակնել ամբողջականության, առավել ևս իր կրող տարրերի համար չի կարող դիալեկտիկական միասնություն լինել:

«Կոնտակտային գոտու» և հայ քաղկեդոնականների անբակ կապին հետամուտ Վ. Հարությունովա-Ֆիդանյանը այդ ըմբռնման դիրքերից անվերապահ մերժում է «կոնտակտային գոտին» բնութագրել որպես «պատմական տևական շրջանում տարբեր ազգությունների բնակության, տարբեր մշակույթների, կրոնական, վարչական և այլ կառույցների այնպիսի գործակցության ոլորտ, որտեղ վերանում են սահմանային տարբերությունները»: Նրա համար հավասարապես մերժելի է նաև «կոնտակտային գոտի» հասկացության «ըն-

¹ *Տէ'ս Բարտյունովա-Ֆիդանյան Բ., Армения и Византия в VII в.: синтезная контактная зона, "Византийский временник", т. 61 (86), М., 2002, с. 59: Տէ'ս և Նալ. Բարտյունովա-Ֆիդանյան Բ., К вопросу о синхронизации основных составляющих контактной зоны (X-XI вв.), "Висы дружбы", сб. ст. в честь Т. Н. Джаксон, М., 2011, с. 27-28.*

² *Տէ'ս Բարտյունովա-Ֆիդանյան Բ., Армения и Византия в VII в.: синтезная контактная зона, с. 60.*

³ *Նույն տեղում:*

⁴ *Բարտյունովա-Ֆիդանյան Բ., К вопросу о концепции контактной зоны (по поводу ст. В. П. Степаненко), с. 62.*

դարձակ» (վիթխարի տարածաշրջանային առումով) կամ «սահմանափակ» (լեդ, քաղաքային և այլն առումով) մեկնաբանության փորձերը¹: Եվ պատճառն այն է, գրում է Նա, որ կոնտակտային գոտու հասարակական-մշակութային գործընթացները բնորոշվում են կոնկրետ տարածաշրջանում գոյություն ունեցող և մաքուր տեսքով հանդես եկող հասարակական, քաղաքական, տնտեսական ինստիտուտների և գաղափարախոսության ձևերի համադրությամբ: Ինստիտուտային այդ ձևափոխումների հետևանքով նրանք նոր որակ են ձեռք բերում և արդյունքում ի հայտ է գալիս մի նոր կառույց, որի շրջանակներում համապատասխան բացատրություն են ստանում այդ շրջանի հայ-բյուզանդական հարաբերությունները (հայկական քաղաքական կազմակերպությունների Բյուզանդիայի հետ միավորվելու անարյուն ակցիաներ, հակաբյուզանդական ապստամբությունների բացակայություն, Բյուզանդիայի հայկական տարածքներ շարժվելու շուրջ հարյուրամյա տևականություն և այլն): Բոլոր այդ բաղադրատարրերի (հոգեկերտվածքի, ազգա-հավատքային, տնտեսական, հասարակական-վարչական) խորապես պատճառաբանված կապը, վկայում է այն փաստը, որ կոնտակտային գոտին գտնվում է դիալեկտիկական միասնության մեջ, որն իր գոյության տրամաբանությունը ի հայտ է բերում երկու մշակույթների փոխազդեցության բարդ երևույթների միջոցով²:

Եվ, ընդհանրացնելով, հավաստում է. «Կոնտակտային գոտին» ոչ միայն և ոչ այնքան հարաբերությունների տարածք է, այլ՝ համադրական երևույթների ձևավորման վայր, որոնք ոչ այնքան մշակույթների գործակցության և փոխազդեցության, որքան փոխներթափանցման արդյունք են»³: Չարգացնելով արժեքանական այդ մոտեցումը Նա Նաև եզրակացնում է, որ «Կոնտակտային գոտու» առանցքային սոցիոկուլտուրալ գործընթացները բնորոշվում են հասարակական, քաղաքական, տնտեսական ինստիտուտների և այդ տարածքներում գոյություն ունեցող և «մաքուր» տեսքով հանդես եկող գաղափարախոսական ձևերի համադրությամբ: Ինստիտուտային այդ կառույցների համադրության հիման վրա էլ ձևավորվում է «նոր որակի» այն կառույցը, որի արդյունքում «կոնտակտային գոտին» գործնականում վերածվում է «դիալեկտիկական միասնության տարածքի», որն իր գոյության տրամաբանությունը դրսևորում է այնպիսի բարդ երևույթների միջոցով, ինչպիսիք են երկու մշակույթների փոխազդեցության ծնունդ հանդիսացող «մշակութային նոր երևույթները»⁴: Ընդ որում, բնութագրական այն հետևությամբ, որ այդ հարաբերությունների գոտին այնպիսի կենսունակ տարածք է, որտեղ բնակվող «ազգերը և նրանց մշակութային համակարգերը չեն միախառնվում»: Այդ համատեքստում հեղինակը հայ-բյուզանդական «կոնտակտային գոտին» բնութագրում է որպես տարածության և ժամանակի մեջ ծավալվող «հարացույց», իրեն բնորոշ բարդ և բազմաշերտ պատմական գործընթացներով⁵:

¹ Տէ՛ւ Արտյոնովա-Փիդանյան Բ., *Армяне-халкидониты на восточных границах Византийской империи*, Е., 1980, с. 90–92; Տէ՛ւ Նաև Արտյոնովա-Փիդանյան Բ., *К вопросу о синхронизации основных составляющих контактной зоны (X–XI вв.)*, с. 27; Նույնի՝ *Синтезная контактная зона: пространство и концепция*, с. 14.

² Տէ՛ւ Արտյոնովա-Փիդանյան Բ., *Армяне-халкидониты: идентичность на стыке этноса и конфессии, “Диалог со временем”, альманах интеллектуальной истории, вып. 21 (Исторические мифы и национальная идентичность)*, М., 2007, с. 326–327; Նույնի՝ *Термин «контактная зона» или «земля» - «хора»*, с. 4; Նույնի՝ *Контактные зоны в системе «Византийского содружества государств»* с. 17.

³ Արտյոնովա-Փիդանյան Բ., *К вопросу о синхронизации основных составляющих синтезной контактной зоны (X–XI вв.)*, с. 29; Նույնի՝ *Термин «контактная зона» или «земля» - «хора»*, с. 4. VI–VII դդ. ծավալված հայ-բյուզանդական համադրական կոնտակտային գոտու փուլերի մասին հեղինակային հիմնական մոտեցումները տէ՛ւ Նաև Նույնի՝ *Армяно-византийская контактная зона (X–XI вв.) (результаты взаимодействия культур)*, М., 1994, с. 26–45; Նույնի՝ *«Повествование о делах армянских» (VII в.)*, источник и время, М., 2004, с. 63–102.

⁴ Տէ՛ւ Արտյոնովա-Փիդանյան Բ., *«Повествование о делах армянских» (VII в.)*, с. 101–102; Նույնի՝ *Синтезная контактная зона: пространство и концепция*, с. 17; Նույնի՝ *К вопросу о синхронизации основных составляющих синтезной контактной зоны (X–XI вв.)*, с. 29.

⁵ Տէ՛ւ Արտյոնովա-Փիդանյան Բ., *«Повествование о делах армянских» (VII в.)*, с. 67.

Նշվեց, որ «կոնտակտային գոտի» հասկացության բովանդակային վերլուծությունը Վ. Չարությունովա-Ֆիդանյանը անփոփոխ կերպով շաղկապել է հայ-բյուզանդական հարաբերությունների հետ: Այդ հիման վրա նա առաջադրում է այն վարկածը, որ VI-VII, հավասարապես նաև X-XI դդ. հայ-բյուզանդական սահմանամերձ տարածքներում պատմական բավականին բարդ և բազմաշերտ գործընթացների ֆոնին շարունակվում էր Բյուզանդիայի և հայ ժողովրդի պատմությունը, ինչպես նաև հայ-բյուզանդական հարաբերությունները, և հենց այդտեղ է ձևավորվել հայ-բյուզանդական «կոնտակտային գոտին», որտեղ ծավալվել են առավել խորքային պատմական այն գործընթացները, որոնք հետագայում ազդեցություն են ունեցել նշված «գոտու» վրա¹:

Այդ ամենով «կոնտակտային գոտի» երևույթի բովանդակային առանձնահատկությունները սահմանելու հանգրվաններից գլխավորը նա համարում է հայ-բյուզանդական բազմադարյա հարաբերությունները, քանի որ «Բյուզանդիայի և Չայաստանի հազարամյա (Չոմից ժառանգած) հարաբերությունները որոշակի իմաստով եզակի են: Տարբեր ժամանակներում Չայաստանը եղել է կայսրության և՛ արևելյան հարևանը, և՛ Արևելքում վասալ երկիր, և՛ կայսրության արևելյան ծայրագավառի մաս: Չայաստանի և Բյուզանդիայի քաղաքական սահմանները մշտապես անկայուն են եղել, իսկ մշակութային սահմանները՝ անկայուն»²: Ավելին, հարաբերությունների այդ ոլորտում «Բյուզանդական հիմնարար գաղափարները ... թափանցելով հայերի հասարակական-քաղաքական գիտակցության մեջ, սահմանող ազդեցություն են ունեցել հայ-բյուզանդական կոնտակտային գոտու ձևավորման և գործառնության համար»³:

Վ. Չարությունովա-Ֆիդանյանը մեկ այլ «բացարձակ ճշմարտություն» է համարում այն, որ «Չայ-բյուզանդական կոնտակտային գոտին անցել է պատմական երկու հիմնական փուլ՝ VI-VII և X-XI դդ.: Բյուզանդական Չայաստանը և՛ առաջին փուլում (VI դարի վերջ – VII դ.), և՛ երկրորդում (X-XI դդ.) իրենից ներկայացնում էր՝ ա) ընդհանուր տարածք, բ) ընդհանուր պետականություն (հայերի որոշակի ինքնավարության առկայությամբ), գ) ազգությունների փոխազդեցություն (ազգաբնակչության «տեղափոխություններ»), դ) մշակութային փոխազդեցություն: Կոնտակտային գոտում հասարակական-մշակութային գլխավոր գործընթացները որոշվել են հայկական և բյուզանդական հասարակական, քաղաքական և տնտեսական ինստիտուտների և գաղափարախոսական ձևերի համադրությամբ»⁴: Նա միաժամանակ պնդում է, որ հոգեկերտվածքի, ազգադավանական, տնտեսական, հասարակական-վարչական քաղաքատարրերի խորապես պատճառական կապը գալիս է հավաստելու, որ հայ-բյուզանդական կոնտակտային գոտին սերտ փոխհարաբերությունների

¹ Арутюнова-Фиданян В., К вопросу о синхронизации основных составляющих контактной зоны (X-XI вв.), с. 29; նույնի՝ Контактная зона: концепции и термины, с. 154-171. Նա նաև հավելում է, որ թեև «կոնտակտային գոտի» հասկացության վերաբերյալ դեռևս միասնական կարծիք գոյություն չունի, «Այդուամենայնիվ որոշ հանգուցային պահեր հանրաճանաչ են: Չամարվում է, որ կոնտակտային գոտու համար բնութագրական է պատմական տևական շրջանում տարբեր ազգությունների համատեղ բնակությունը, տարբեր մշակութային, կրոնական, վարչական և այլ համակարգերի գործակցությունը, յուրատիպ լեզվական իրավիճակը, ինչպես նաև սահմանների անկայուն լինելը և դրանց շարժունությունը», Арутюнова-Фиданян В., Армения и Византия в VII веке: синтезная контактная зона, с. 60.

² Арутюнова-Фиданян В., Армения и Византия в VII в.: синтезная контактная зона, с. 60-61; նույնի՝ Контактные зоны в системе «Византийского содружества государств», с. 16; նույնի՝ К вопросу о синхронизации основных составляющих синтезной контактной зоны, с. 28-29.

³ Арутюнова-Фиданян В., Контактные зоны в системе «Византийского содружества государств», с. 17.

⁴ Арутюнова-Фиданян В., К вопросу о синхронизации основных составляющих синтезной контактной зоны, с. 29; նույնի՝ Контактные зоны в системе «Византийского содружества государств», с. 16; նույնի՝ Синтезная контактная зона: пространство и концепция, с. 15; նույնի՝ Армения и Византия в VII в.: синтезная контактная зона, с. 70; նույնի՝ Культурные и политические коммуникации на востоке Византии: результаты взаимодействия // «Древнейшие государства Восточной Европы», 2009: «Трансконтинентальные и локальные пути как социокультурный феномен» М., 2010, с. 175. Տե՛ս նաև նույնի՝ Армяне-халкидониты на восточных границах Византийской империи, с. 90-92.

այնպիսի ամբողջություն է, որն իր գոյության տրամաբանությունը բացահայտում է հարաբերվող մշակույթների փոխներթափանցման արդյունք հանդիսացող բարդ երևույթների միջոցով:

Այդ դիրքերից նա անցում է կատարում «համադրական կոնտակտային գոտի» հասկացության հայեցակարգային ըմբռնմանը. «Հասարակական նոր մանրակերտը նշանակելու համար ես ներմուծում եմ «համադրական կոնտակտային գոտի» եզրը, գրում է նա, – որը երկու մշակույթների միջև ինտերտարածքը նշանակելու համար ներառում է ընդհանրացման երեք մակարդակ՝ ա) կոնկրետ ժամանակի և տարածության մեջ գտնվող հասարակական այդ մանրակերտը որպես տարածաժամանակային հաստատուն, բ) սահմանամերձ տարածքներում ձևավորված հասարակական նոր մանրակերտի հայեցակարգ, գ) հասարակության նոր մանրակերտը հիմնավորելու համար փաստերի հավաքման և խմբավորման մեթոդիկա»¹: Հեղինակը պարզաբանում է նաև, որ «... «համադրական կոնտակտային գոտին» ոչ միայն կոնտակտների, այլև՝ համադրական երևույթների ձևավորման վայր է, որոնք հանդիսանում են մշակույթների գործակցության և փոխազդեցության, այնպես էլ դրանց փոխներթափանցման արդյունք»²:

Վ. Հարությունովա-Ֆիդանյանի հայեցակարգի բնորոշ գծերից մեկն էլ այն, որ «կոնտակտային գոտի» երևույթի բովանդակային նշյալ լրացումն ունի իր հիմնական ինտուիցիան, համաձայն որի «**Համադրական կոնտակտային գոտու ծագումը անմիջականորեն կախված չէ կողմերի ջանքերից** (սրանց ռազմաքաղաքական պատվամոլությունից, հավատքային ուղղվածությունից և այլն): **Այդ կառույցը ներունակ կերպով ձևավորվում է պետական, քաղաքական, զինվորական, դիվանագիտական, տնտեսական, գաղափարախոսական, հավատքային փոխազդեցությունների հատման կետում** (ընդգծումները մերն են - *Լ.Բ.*)»³: Այդ ելակետի դիրքերից հեղինակը ձևակերպում է իր հայեցակարգի բաղադրատարրը հանդիսացող մեկ այլ ենթադրություն-եզրակացության, այն է՝ հայ-բյուզանդական «... սահմանամերձ մարզերի հասարակական նոր մանրակերտի՝ համադրական կոնտակտային գոտու ձևավորման անպատճառավոր պայմանը, հավանաբար, հանդիսանում է ազգությունների և մշակույթների փոխազդեցությունը. ռազմա-քաղաքական, հասարակական-վարչական և գաղափարախոսական հենքային բաղադրատարրերի համաժամյա մերձեցումը»⁴:

Անկասկած, զուտ տեսական ձևակերպումների առումով բոլոր այդ պնդումները յուրատիպ տրամաբանության արդյունք են: Միանշանակ է նաև, որ այն որոշակի տեսական արժեք կարող էր ունենալ միայն այն դեպքում, եթե քիչ թե շատ հիմնավորվեր պատմական փաստերով: Այդ տեսանկյունից առանձնահատուկ ուշադրության է արժանի այն փաստը, որ Վ. Հարությունովա-Ֆիդանյանը ամենևին հոգ չի տանում իր անվերապահ պնդումներն

¹ Арутюнова-Фиданян В., Синтезная контактная зона: пространство и концепция, с. 16.

² Арутюнова-Фиданян В., Контактные зоны в системе «Византийского содружества государств», с. 17; նույնի՝ Армяно-византийская контактная зона (X-XI вв.), (результаты взаимодействия культур), с. 64-78.

³ Арутюнова-Фиданян В., Синтезная контактная зона: пространство и концепция, с. 16. Այդ դիրքում հեղինակը առանձնապես կարևորում է կողմերի մշակութային համագործակցության դերը, քանի որ «երկու մշակույթների փոխազդեցությունը արտահայտվեց նաև հայ և բյուզանդական հասարակության հոգեկերտվածքի փոփոխությունների վրա, առավել հստակ հայ պատմիչների գործերում՝ «Բյուզանդիայի պատկերի» Էփոյուղիայի գործում: Կոնտակտային գոտու ձևավորման և գոյության փուլում «Բյուզանդիայի պատկերը» հիմնականում դրական է» (Арутюнова-Фиданян В., Армения и Византия в VII в.: синтезная контактная зона, с. 70. Հմնմ. Арутюнова-Фиданян В., Синтезная контактная зона: пространство и концепция, с. 15):

⁴ Арутюнова-Фиданян В., К вопросу о синхронизации основных составляющих синтезной контактной зоны (X-XI вв.), с. 34. Նա հավելում է նաև, որ «Այսպիսով, «կոնտակտային գոտին» սուկ հարաբերությունների գոտի չէ միայն, այն ոչ միայն մշակույթների համագործակցության, այլև փոխազդեցության արդյունքում ձևավորված երևույթների, այսինքն՝ համադրական երևույթների վայր է» (Арутюнова-Фиданян В., Армения и Византия в VII в.: синтезная контактная зона, с. 70).

ու եզրակացությունները հիմնավորելու մասին: Ավելի ճիշտ կլինի ասել՝ **Նա ընտրում է իր հայեցակարգը ենթադրությունների միջոցով հիմնավորելու ճանապարհ:** Վկայությունն այն է, որ Նրա բոլոր եզրահանգումները հիմնականում կառուցվում են «կարելի է ենթադրել», «հավանական է», «հնարավոր» է և պայմանական այլ հասկացությունների վրա: Եվ որ գլխավորն է, բոլոր պարագաներում Նրա «եզրակացությունները» ուղղորդված են ի օգուտ հայ քաղկեդոնականության, և միտված են արդարացնելու Հայաստանում վերջինիս «մեծամասնական և իշխող գոյության», ինչպես նաև՝ Նույնքան հիմնազուրկ «հավատքային և մշակութային բացառիկության» բացարձակ անհիմն տեսակետները: Այդ պնդման վկայությունները ավելի քան ակնհայտ են:

Այսպես, Վ. Հարությունովա-Ֆիդանյանի հիմնարար մոտեցումներից մեկն այն է, որ «Կոնտակտային գոտին սոսկ սահմանամերձ գոտի չէ, **ռազմական կամ դիվանագիտական միջոցառումների շնորհիվ նվաճված, բազմազգ ազգաբնակչությամբ և ազգաբնակչության հետագա ասիմիլացման և հասարակական-տնտեսական ու քաղաքական ինստիտուտներ պարտադրելու կամ կամավոր ընդունման տարածք չէ:** Սահմանամերձ լինելը, բազմազգությունը, ռազմական կամ խաղաղ փոխներթափանցումը, ազգերի և մշակույթների փոխազդեցությունը այդ բոլորը անհրաժեշտ են կոնտակտային գոտու ծագման համար, բայց բավարար չեն գոյության, ավելի ճշգրիտ՝ կոնտակտային գոտու կեցությունը իրականացնելու համար (ընդգծումը մերն է - Լ.Բ.)»¹: Եվ հավելյալ մեկ անգամ ևս հավաստում է, որ «կոնտակտային գոտին» օրգանական և կենսունակ կառույց է՝ իր օրենքներով և մշակութային պատկերի առանձնահատկությամբ, քանի որ այն սոսկ «... հարաբերությունների տարածք չէ, այլ՝ համադրական երևույթների ծագման վայր, որոնք հանդիսանում են ոչ թե սոսկ գոյատևման և փոխազդեցության, այլև՝ մշակույթների փոխներթափանցման արդյունք»²: Բայց արժեքային առումով այն էական լրացմամբ, որ «Համադրական երևույթների ձևավորման համար նվազագույնը անհրաժեշտ է մշակութային համակարգերի փոխգործակցության և փոխազդեցության մի քանի տասնամյակ (կամ հարյուրամյակ): Այդպիսով, **ժամանակային գործոնը կոնտակտային գոտու համար սահմանող հաստատուն է հանդիսանում (ընդգծումը մերն է - Լ.Բ.)**»³:

Եվ այսպես, այս հարցում Վ. Հարությունովա-Ֆիդանյանի հայեցակարգն ունի հետևյալ տեսքը: Հայ-բյուզանդական բազմադարյա հարաբերությունների արդյունքում կողմերի պետական, քաղաքական, գիևվորական, դիվանագիտական, տնտեսական, գաղափարախոսական, հավատքային փոխազդեցությունների շփման կետերում օբյեկտիվորեն ձևավորվում է կոնտակտային գոտի, որտեղ իսպառ բացակայում է ազգաբնակչության ասիմիլացիան, հասարակական-տնտեսական և քաղաքական ինստիտուտներ պարտադրելը կամ դրանց հարկադրական ընդունումը: Դա համադրական երևույթների ծագման վայր է, որտեղ առաջատար դեր է վերապահված մշակույթների փոխներթափանցմանը: Ընդ որում, քննարկվող հայեցակարգի եռությունը բացահայտող այն էական լրացմամբ, որ համադրական կոնտակտային գոտում **«Քաղաքական և դավանական լրյալությունը, խեղդելով «օտարման մեխանիզմները», նպաստում է համադրական երևույթների ձևավորմանը**

¹ Арутюнова-Фиданян В., Синтезная контактная зона: пространство и концепция, с. 15-16. *Նա փարփարանում է նաև.* «Համադրական կոնտակտային գոտի» ելք ասելով ես ամենևին չեմ հասկանում սոսկ տարածք, որտեղ ազգերը և նրանց մշակութային համակարգերը գոյատևում են առանց միախառնվելու, ոչ ինքնավար վարձացման անկլավներ, այլ՝ օրգանական և կենսունակ կառույց իր օրենքներով և մշակութային պատկերի առանձնահատկությամբ» (նույն տեղում, էջ 16):

² Арутюнова-Фиданян В., Культурные и политические коммуникации на востоке Византии: результаты взаимодействия, с. 176; նույնի՝ К вопросу о синхронизации основных составляющих синтезной контактной зоны, с. 29; նույնի՝ Армяно-византийская контактная зона (X-XI вв.). результаты взаимодействия культур, с. 14-44; նույնի՝ «Повеествование о делах армянских» (VII в.). Источник и время, с. 63-78; նույնի՝ К вопросу о синхронизации основных составляющих синтезной контактной зоны (X-XI вв.), с. 29.

³ Арутюнова-Фиданян В., Синтезная контактная зона: пространство и концепция, с. 15; նույնի՝ К вопросу о синхронизации основных составляющих синтезной контактной зоны (X-XI вв.), с. 28.

(ընդգծումը մերն է - Լ.Բ.)»¹: Եվ այդ տեսանկյունից Վ. Չարությունովա-Ֆիդանյանը «համադրական կոնտակտային գոտի» երևույթի բովանդակային կարևոր մեկ այլ տարր է համարում այն, որ «Նման կարգի կառույցների ծագումը, որպես կանոն, սերտորեն կապված է իրենց տարածքներում բաց մշակույթների գոյության և գործունեության հետ, որոնք ապահովում են էվոյուցիոն զարգացման հավասարակշռությունը»²:

Եվ «հարկադրանքից զերծ, լոյալության հիման վրա կառուցված» հայ-բյուզանդական համադրական կոնտակտային գոտու ձևավորման պատիվը վերագրում է Չուստինիանոս I կայսրին: «Արևելքում կոնտակտային գոտի ստեղծելու առաջին և վճռական քայլը, – գրում է նա, – կատարեց Չուստինիանոս I-ը (527-565 թթ.): Կայսրը, հասկանալի է, չէր պատրաստվում հասարակական նոր մանրակերտ ստեղծել, հակառակը, մարմնավորելով կայսրության տարասեռ մասերը միավորելու իր գաղափարը, նա ձգտում էր Չայաստանը դարձնել Բյուզանդիայի մասը: Մեծ ինքնակալի ըմբռնմամբ միավորումը միասնականացում էր, կայսերական պրովինցիաների անհատական պատկերի ոչնացում: Չուստինիանոսն ամենից առաջ իրագործեց Չայաստանի ռազմական վերակառուցում ... Ռազմական բարենորոգումներին հաջորդեցին քաղաքացիական վերակառուցումները: ... Եվ, վերջապես, Չայաստանը վերակազմելու ամենալուրջ քայլը պետք է համարել հասարակական կառույցը փոխելու Չուստինիանոսի փորձը»³: Այնինչ պատմական փաստերի օբյեկտիվ վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ այս պարագայում խոսք անգամ չի կարող լինել համադրական կոնտակտային գոտի ստեղծելու մասին:

Ի՞նչ հիման վրա է այդ համատեքստում առաջնային համարվում մշակութային փոխներթափանցումը: Մի՞թե պարզ չէ, որ այդտեղ առկա է վարչական բռնի միջոցներ կիրառելու քաղաքականություն, այլ կերպ ասած Բյուզանդիան «... հայերի նկատմամբ վարել է պետականությունից զրկելու, թույլ ու հնազանդ վիճակում պահելու քաղաքականություն, որը եղել է տրադիցիոն և անփոփոխ»⁴: Անշուշտ, անհեթեթ է հնչում նաև հեղինակի այն պնդումը, որ հայ-բյուզանդական համադրական կոնտակտային գոտու ազդեցությամբ է պայմանավորվել նաև առասպելական կենտավրոս հիշեցնող «միջնադարյան հայերի բավականին բարդ ազգամշակութային գիտակցությունը», քանի որ «... մի մակարդակում նրանք իրենց գիտակցել են արևելա-քրիստոնեական, իսկ հետագայում՝ բյուզանդական աշխարհի մաս, մյուսում՝ հայ հասարակակության մաս»⁵:

Եվ քանի որ հեղինակի մոտեցման համաձայն «ժամանակային գործոնը կոնտակտային գոտու համար հաստատուն մեծություն է»⁶, նա զարգացնելով իր մոտեցումները պնդում է. «**Չուստինիանոսի հաջորդների ժամանակ կոնտակտային գոտու միասնական քաղաքական-վարչական և մշակութային տարածքում խորանում են գործընթացները:** Չետ-հուստինիանոսյան շրջանում և մինչև արաբական նվաճումներ Չայաստանը մտնում է կայսրության արևելյան պրովինցիաներից մեկը, Իրանի դեմ պատերազմի պլացդարմ և քրիստոնեական աշխարհի պահակետ: 591 թ. Բյուզանդական Չայաստանը ընդարձակվում է Պարսկահայաստանի մեծ մասի հաշվին ...: Չուստինոս II-ը (565-578), Տիրերիոսը (578-

¹ Арутюнова-Фиданян В., Синтезная контактная зона: Пространство и концепция, с. 16:

² Լոյլն տեղում: Տե՛ս նաև Арутюнова-Фиданян В., Культурные и политические коммуникации на востоке Византии: результаты взаимодействия, с. 167.

³ Տե՛ս Арутюнова-Фиданян В., Армения и Византия в VII в.: синтезная контактная зона, с. 63-64.

⁴ Իսկանյան Վ., Հայ-բյուզանդական դաշինքը Պարսկաստանի դեմ (VI դար), «Պատմաբանասիրական հանդես», 1963, № 4, էջ 58:

⁵ Арутюнова-Фиданян В., Армяне-халкидониты: идентичность на стыке этноса и конфессии, с. 327. Անշուշտ, քննարկելի է նաև հեղինակի այն պնդումը, որ այս շրջանում «Երկու երկրների մշակույթների փոխազդեցությունը ապրել է նաև հայ հասարակության հոգեկերտվածքի վրա», որի վկայություն է համարվում «կոնտակտային գոտու ձևավորման և գոյության ընթացքում հայ պատմիչների գործերում առավել վառ դրսևորված «Բյուզանդիայի դրական պատկերը» (տե՛ս Арутюнова-Фиданян В., Армения и Византия в VII в.: синтезная контактная зона, с. 70):

⁶ Арутюнова-Фиданян В., Армения и Византия в VII в.: синтезная контактная зона, с. 70; Լոյլի՝ К вопросу о синхронизации основных составляющих синтезной контактной зоны, с. 29.

587), Մավրիկիոսը (587-602), Փոկասը (602-610) և, հատկապես, Յերակլիոսը (610-641) օժանդակելով Չայաստանում հակապարսկական ելույթները և հայկական զորքերն օգտագործելով Իրանի դեմ պատերազմում ճկուն քաղաքականություն էին իրականացնում (ընդգծումը մերն է - Լ.Բ.)»¹: Այնինչ, ինչպես պատմական վավերագրերի անկողմնակալ վերլուծությունն է ցույց տալիս, այս պարագայում ևս առնչվում ենք ոչ թե երկխոսության, այլ բյուզանդական կայսրերի վարչաքաղաքական բռնաճնշումների հետ: Այլ կերպ ասած՝ «Դեռևս Չուստինիանոս կայսեր օրոք սկիզբ առած կայսրության կազմում գտնվող բազմաթիվ, յուրաքանչյուրն իր ազգային ավանդույթներով ու օրենքներով ապրող ու ղեկավարվող ժողովուրդները նույն սանրով սանրելու խիստ ու դաժան քաղաքականությունը չէր դադարել նրա հաջորդների օրոք»²:

Ըստ էության, սուբյեկտիվ և փաստերով բավարար հիմնավորված չէ նաև հայ-բյուզանդական համադրական կոնտակտային գոտու երկրորդ փուլի մասին Վ. Չարությունովա-Ֆիդանյանի տեսակետը: Այս հարցում նրա ելակետն այն է, որ այս «... փուլում (X-XI դդ.) քաղկեդոնական գաղափարախոսությունը Չայ Եկեղեցու համար որոշակի վտանգ էր ներկայացնում (գոյություն ունեին մեծ թվով հայ քաղկեդոնական թեմեր), բայց իբրև կառույց հայ քաղկեդոնական եկեղեցին կորցրեց իր դիրքերը»³: Ի տարբերություն VII դարի, — գրում է նա, — որի ժամանակ հայ-բյուզանդական կոնտակտային գոտում բնակվող ուղղափառ հայերը բավականին խորությամբ ընկղմվել էին հունական մշակույթի և լեզվի աշխարհում, արաբական տիրապետությունից հետո հայ քաղկեդոնականները իրենց հավատարմությունը հռչակելով «հունական հողի, հունական հավատի և հունարեն լեզվի» նկատմամբ, այնքան էին կտրվել «հունական հողից», որ այլևս ազատ կերպով չէին տիրապետում հունարենին⁴: Այդ ամենի հետևանքով աստվածաբանական բանավեճի համար հայ քաղկեդոնականները իրենց աշխատանքները հիմնականում սկսել են գրել հայերեն: Մեկ այլ առանձնահատկություն է համարվում այն, որ թեև X-XI դդ. Չայաստանում ընդարձակվեց «դավանական հանդուրժողականությամբ աչքի ընկնող» քաղկեդոնականության աշխարհագրությունը, այդուհանդերձ, «... հայ քաղկեդոնական համայնքը հատկապես X-XI դդ. վերջին, երբ Չայաստանի մեծ մասը մտավ Բյուզանդական կայսրության կազմի մեջ, իր խնդիրների մեջ ներառեց բանավիճային և նորադարձության խնդիրները»⁵:

Վ. Չարությունովա-Ֆիդանյանի համոզմամբ, այս փուլում հայ-բյուզանդական կոնտակտային գոտու «արդյունավետ գործունեության» արգասիքը կայսրության արևելքում հասարակական-վարչական փոփոխություններն էին, որի սկիզբը դրվեց Տարոն աշխարհի անարյուն նվաճմամբ: Իսկ համադրական երևույթների էությունը բացատրում է նրանով, որ «Ողջ տարածքը, որին հավակնում էր կայսրությունը, նրա համար հանդիսանում էր «խորա» (հուն.՝ χώρα – աշխարհ, երկիր - Լ.Բ.), Շիրակի, Տարոնի, Իբերիայի Բագրատունիներին և կայսրիկներին պատկանող առանձին հատվածները նույնպես «խորա» են: Դրանց ներսում գտնվում են առանձին տիրակալների պատկանող մանր խորաներ»⁶: Միաժամանակ հիմնահարցի լուծումը հեղինակի կողմից կապվում է հայ-քաղկեդոնականների պատմական

¹ *Տէ՛ւ Արտյոնո՞ւա-Փի՞ճանյան Բ., Արմենիա և Բիզանտիա և VII Ե.։ սինթեզնայ կոնտակտնայ շոն, Ե. 64.*

² *Քարթիկյան Չ., Թեոփանես Խոստովանողը, նրա «Ժամանակագրությունը» և հայ-բյուզանդական հարաբերությունները VII-VIII դարերում, «Օտար աղբյուրները Չայաստանի և հայերի մասին», 13, «Բյուզանդական աղբյուրներ», 7, Ե., 1983, Էջ XXVIII-XXIX:*

³ *Արտյոնո՞ւա-Փի՞ճանյան Բ., Մրաոսլաւնայ արմենիա և արմենո-բիզանտիայնայ կոնտակտնայ շոն, «Վեստնիկ ՍՏԳՄ», սերիա III: Փիլոլոգիա, 2009, Վոյ. 3 (17), Ե. 9.*

⁴ *Տէ՛ւ Արտյոնո՞ւա-Փի՞ճանյան Բ., Կուլտուրնայ և քոլիտիկեսկայ կոմունիկալիոն Վոստոկե Բիզանտիայ: ը-շուլտատայ Վզայմո՞ճեյստայ, Ե. 173; նոյնի՞ Մրաոսլաւնայ արմենիա և արմենո-բիզանտիայնայ կոնտակտնայ շոն, Ե. 8.*

⁵ *Արտյոնո՞ւա-Փի՞ճանյան Բ., Մրաոսլաւնայ արմենիա և արմենո-բիզանտիայնայ կոնտակտնայ շոն, Ե. 9.*

⁶ *Արտյոնո՞ւա-Փի՞ճանյան Բ., Տերմինոլոգիկեսկոյ օբոշնաչենիո նո՞ւոյ սոցիալնո-ադմինիստրատիւոնոյ ստրուկտուրայ Վոստոկե Բիզանտիայնայ Իմպերիայ (X-XI ԵԵ.), Ե. 47, 50.*

ճակատագրի հետ, քանի որ X-XI դդ. նրանք գտնվում էին Բյուզանդիայի քաղաքական հետաքրքրությունների ոլորտում: Եվ պաճառը համարում է այն, որ «... հայ քաղկեդոնականների յուրատիպ գծերը պայմանավորված էին «կայսերական ուղղափառության» պատկանելությամբ և դրանով էլ որոշվել է նրանց վարքագծի ուղղվածությունը, մասնավորապես՝ կայսրության արևելյան պրովինցիաների վարչակարգերում նրանց ներկայությունը, որտեղ գերակշռում էր հայ ազգաբնակչությունը»¹:

Նա պնդում է նաև, որ հայ-բյուզանդական կոնտակտային գոտու հետադարձ ազդեցության վկայություն հանդիսացող «խորա» եզրը բացի բոլոր ժամանակներում ներուևակ «հող, երկիր» իմաստից, X-XI դդ. ձեռք է բերում հայ-բյուզանդական կոնտակտային գոտու հասարակական-վարչական իրողությունները նշանակելու առանձնահատուկ եզրի նշանակություն: «խորան» ամենից առաջ կոնտակտային գոտու ողջ տարածքն է, որի մեջ մտնում են ոչ միայն կայսրության ռազմա-վարչական մարզերը, այլև հայկական, հունական, արաբական կախյալ և կիսաանկախ քաղաքական կառույցները, որոնք ևս իրենց հերթին կոչվում են «խորա»: «խորան» և՛ կայսրության խոշոր ռազմա-վարչական մարզն է (Վասպուրական, Մեծ Հայք և Իբերիա և այլն) և՛, վերջապես, այն ոչ մեծ մարզ է, քաղաք, ամրոց, որը գտնվում է մեծ մարզի տարածքում («խորա խորայի մեջ» ինչպես Կեկավմենն է գրում)»²:

Այդ ամենը առանձնահատուկ շեշտադրելը հեղինակի կողմից ծառայեցվում է իր համար գլխավոր՝ հայ-բյուզանդական համադրական մշակութային գործակցության «հիմնավորմանը»: Դրանով է բացատրվում նաև «բաջածանոթ իրադարձությունների» մանրամասն շարադրանքը, որը նա անհրաժեշտ է համարում այն նկատառումով, որ «... դա հայ տիրակալների կողմից իրենց հողերը կայսրական հողերի և տիտղոսի փոխարեն Բյուզանդիային հանձնելու առաջին դեպքերից էր, անկախ հայկական տիրակալների բյուզանդական վարչակարգի ֆուկցիոներ դառալու նախադեպերից մեկը»³: Եվ ընդհանրացնելով հավելում է. «Այդ բոլոր դիտարկումները բերել են այդ տարածության մեջ և այդ ժամանակում առանձնահատուկ հասարակական մանրակերտի գոյության վարկածին: Արդյունքում առաջադրվեց հայ-բյուզանդական սահմանամերձ տարածքների կազմակերպման նոր հայեցակարգ, որն իմ կողմից ոչ այնքան օրիգինալ կերպով կոչվեց «հայ-բյուզանդական կոնտակտային գոտի»⁴:

Лиза Каримян, КОНЦЕПЦИЯ АРМЯНО-ВИЗАНТИЙСКОЙ “КОНТАКТНОЙ” ЗОНЫ В. АРУТЮНОВОЙ-ФИДАНЯН. В статье обосновывается, что предложенные В. Арутюновой-Фиданян понятия армяно-византийская «контактная зона», равно как и «синтезная контактная зона», а также анализ особенностей их социально-административного, национально-религиозного и менталитетного уровня являются несовершенными и односторонними.

Показано, что утверждение В. Арутюновой-Фиданян о «контактной зоне» как территории диалектического единства недостаточно обосновано, поскольку носителем таких отношений считается только армянская халкидонская община, что свидетельствует о том, что эта зона является частной и узкой, целью которой было обращение византийских

¹ Арутюнова-Фиданян В., *Армяне-халкидониты*, “Православная энциклопедия”, т. III, М., 2001, с. 327.

² Арутюнова-Фиданян В., *Терминологическое обозначение новой социально-административной структуры на востоке Византийской империи (X-XI вв.)*, с. 52; նույնի՝ *Культурные и политические коммуникации на востоке Византии: результаты взаимодействия*, с. 179-180.

³ Арутюнова-Фиданян В., *Армяно-византийская контактная зона (X-XI вв.)*. *результаты взаимодействия культур*, с. 16.

⁴ Арутюнова-Фиданян В., *К вопросу о синхронизации основных составляющих синтезной контактной зоны (X-XI вв.)*, с. 28.

армян в халкидонизм. Обосновано также, что исторические факты противоречат ее утверждению о том, что «искусно построенные контактные зоны» византийских императоров способствовали расширению армянских халкидонских общин.

Автор статьи также утверждает, что на византийско-армянских территориях халкидонизм был принужден административными средствами. А в сфере государственной политики армянские халкидонские епархии рассматривались как основы византийского движения на восток.

Ключевые слова: граничная территория (лимес), *граничная* зона (лимитроф), контактная зона, культурный диалог, религиозный диалог, халкидонская церковь, халкидонство, антихалкидонская церковь, антихалкидонство, хора.

Liza Karimyan, V. ARUTYUNOVA-FIDANYAN'S CONCEPT OF ARMENIAN-BYZANTINE "CONTACT" ZONE. The article substantiates that the concepts of the Armenian-Byzantine "contact zone", equally the "joint contact zone", as well as the discussion of the features of their socio-administrative, national-religious-mental levels proposed by V. Arutyunova-Fidanyan are imperfect and one-sided.

V. Arutyunova-Fidanyan's assertion that the "contact zone" is a territory of dialectical unity, is shown to be insufficiently grounded, since the Armenian Chalcedonic community is rendered the only carrier of such relations, which proves this zone private and narrow, aimed at converting Byzantine Armenians.

It is also stated that historical facts distort the author's assertion that "contact zones skillfully constructed" by the Byzantine emperors contributed to the expansion of the Armenian Chalcedonic communities.

The author of the article also claims that Chalcedonism was imposed by administrative means on the Byzantine-Armenian territories. Yet, politically, the Armenian Chalcedonian dioceses were considered the basis for the Byzantine movement to the East.

Key words: boundary, border zone, "contact zone", cultural dialog, religious dialog, Chalcedonic church, Chalcedonism, Anti-Chalcedonic church, Anti-Chalcedonism, khora.